Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
15	Օգոստոս	2019 թ.	Ա	9115053247
[4] Մատակարարման ամսաթիվ				
15	Օգոստոս	2019 թ.		

Ճշգրտվող հաշվի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	25 Փետրվար, 2019 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 1 5 9 9
[9] Անվանումը	«ՍԵՐՎԻՍ ԷՅԷՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 2 6 3 1 5 9 9 / 1
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ N 2050022394861001
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 16 շ. 40 41
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Հ. Քարտաշյան
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ. Քարտաշյանի կողմից նշանակված դատահաշվապահական և դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն, Քրգործ թիվ 16191918	հատ	1	250000		250000	20	50000	300000
Ընդամենը						250000	X	50000	300000

Դուրս գրող՝ JALALYAN GARIK 1905770138
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

15/08/2019 08:47:19

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատահաշվապահական-դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

ք.Երևան **25 հունվարի 2019թ.**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Գ.Քարտաշյանս, վերանայելով վարույթիս թիվ 16191918 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունից ստացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարին հասցեագրված քաղաքացի Հռիփսիմե Ռազմիկի Գրիգորյանի դիմումն Երևան քաղաքի թիվ 92 մանկապարտեզում ոմն տիկին Հարությունյանի կողմից չարաշահումներ կատարելու վերաբերյալ: Սույն թվականի հունիսի 21-ին՝ ժամը 18:30-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում Հ.Գրիգորյանը տվել է բացատրություն այն մասին, որ 2015 թվականից Երևանի թիվ 92 մանկապարտեզի տնօրեն Կարինե Հարությունյանի կողմից մանկապարտեզի աշխատակիցներից և ծնողներից պարբերաբար կատարվում է անօրինական դրամահավաք:

Քննության արդյունքում բացատրություններ են տվել թիվ 92 մանկապարտեզի հատուկ մանկավարժներ Մարիամ Սարգսյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, հատուկ մանկավարժի օգնականներ Աննա Արսենյանը, Մարիամ Լևոնյանը և մաքրուհի Սիրարփի Բեգլարյանն այն մասին, որ տնօրենի կողմից աշխատողները ենթարկվում են ոչ նորմալ գործունեության՝ անմարդկային վերաբերմունքի, ինչպես նաև չհիմնավորված և անօրինական դրամահավաքների մասին:

2018 թվականի հուլիսի 2-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16191918 քրեական գործը, որը 2018 թվականի հուլիսի 4-ին քննչական ենթակայության կարգով ուղարկվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին: Հուլիսի 5-ին քրեական գործն ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին՝ օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու և դեպքի իրական հանգամանքները պարզելու վերաբերյալ:

Նախաքննության ընթացքում Հռիփսիմե Ռազմիկի Գրիգորյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականից աշխատում է Երևան քաղաքի թիվ 92 մանկապարտեզում՝ որպես հատուկ մանկավարժ: Աշխատանքի է ընդունվել «Արբես» առողջության կենտրոնի կողմից նախաձեռնած ծրագրի միջոցով, որի նպատակն էր սահմանափակ կարողություններով տեղ երեխաների հետ աշխատող հատուկ

ընդունվելուց ի վեր մանկապարտեզի տնօրենն է Կարինե Հարությունյանը: Խնդիրներ մանկապարզում միշտ եղել են, սակայն փետրվար ամսից սկսած իրենք՝ իրեր խմբով, որի մեջ մտնում են երկու հատուկ մանկավարժ՝ ինքը և Մարիամ Սամվելի Սարգսյանը, երկու օգնականներ՝ Աննա Արսենի Արսենյանը և Մարիամ Մերուժի Լևոնյանը, մեկ մաքրուհի՝ Սիրարփի Խաչատուրի Բեգլարյանը որոշել են պայքարել մանկապարտեզում առկա դրամահավաքությունների դեմ: Վերջին դրամահավաքի դեպքը եղել է կապված փոխտնօրեն Ռուզան Մախմուրյանի ծննդյան տարեդարձի՝ 30.05.2018-ին մանկապարտեզի 55 աշխատակիցներից, այդ թվում՝ իրենց խմբի 5 աշխատակիցներից յուրաքանչյուրից 1.000-ական դրամ հավաքելու դեպքը, երբ իրենք հրաժարվել են՝ նշելով, որ նրան ծննդյան առիթով ծաղկեփունջ կնվիրեն խմբի կողմից: Որին ի պատասխան տնօրենը սպառնացել է հեռացնել աշխատանքից: Մյուս աշխատակիցները տվել են այդ գումարը: Բացի այդ ընդունված կարգի համաձայն՝ եթե աշխատանքի չի ներկայանում, ապա դրա համար պետք է բացակա ստանա և աշխատավարձից այդ օրվա աշխատավարձի պահում լինի: Ինքն աշխատավարձը բանկային քարտով է ստանում և կոնկրետ բացակայելու հետ կապված՝ մինչև մոտ մեկ տարի առաջ տնօրենը սահմանված կարգով բացակա չէր նշանակում, այլ ամբողջական աշխատավարձը ստանալուց հետո առձեռն այդ բացակայի գումարը տվել են հաշվապահ Գայանեին, ում ազգանունը չգիտի: Հստակ իր հետ մեկ անգամ է նման դեպք պատահել, որ 2.5 տարի առաջ մեկ օր բացակայել է և այդ գումարը տվել է հաշվապահին, որ փոխանցի տնօրենին: Իսկ վերջին մեկ տարվա ընթացքում իր հետ աշխատող հատուկ մանկավարժ Մարիամ Սարգսյանը բացակայել է երկու օր՝ 2017թ. նոյեմբեր ամսին և ամբողջական աշխատավարձ է ստացել, սակայն չեն պահանջել վերադարձնել բացակայած օրերի աշխատավարձը: Չգիտի, թե ինչն է պատճառը վերջին մեկ տարվա նման փոփոխության: Մանկապարտեզում մեկ տարվա ընթացքում ունենում են երկու հանդես՝ աշնանային և գարնանային, որից առաջ տնօրեն Կարինե Հարությունյանը իրենց՝ հատուկ մանկավարժներից կանչում և պահանջում է, որ ծնողները տնօրենին վերաբերմունք ցույց տան՝ դրամի ձևով նվեր ստանալու իմաստով: Իրենք խմբի երեխաների ծնողներին հայտնել իրավիճակը, նրանք հավաքել են այդ գումարը և տվել: Հստակ նման դեպք եղել է մեկ անգամ անցած տարի աշնանային հանդեսի ժամանակ, երբ իրենց խմբի ծնողները նմանատիպ մյուս խմբի ծնողների հետ միասին յուրաքանչյուր բալիկի համար 1.000-ական ՀՀ դրամ են հավաքել՝ 5.000 ՀՀ դրամ տվել են փոխտնօրենին՝ Ռուզան Մախմուրյանին, 10.000ՀՀ դրամ՝ տվել են տնօրենին: Մանկապարտեզն ունի մեկ տնօրեն, մանկավարժական գծով մեկ փոխտնօրեն՝ Ռուզան Մախմուրյանը, տնտեսական գծով մեկ փոխտնօրեն՝ Մարգարիտա Աշչյանը, մեկ հաշվապահ՝ Գայանե, ում ազգանունը չգիտի, մեկ բուժքույր՝ Էլյա Ղազարյանը: Ինքը մեկ ամիս առաջ է իմացել ՀՀ կրթության և գիտության նախարարի ֆեյսբուք սոցիալական կայքի անձնական էջում գրված հայտարարությունից, որ Երևանի քաղաքապետարանը յուրաքանչյուր ամիս գումար է տրամադրում պետական մանկապարտեզներին՝ տնտեսական ապրանքների համար: Սակայն իր աշխատելու երեք տարիների ընթացքում ինքը չի տեսել, որ ստանան որևէ տնտեսական ապրանք, փոխարենը տնօրենն ասել էր, որ տնտեսական ապրանքներ չեն տրամադրվում, և իրենք այդ ամենը պետք է ձեռք բերեն խմբի երեխաների ծնողների միջոցով: Իրենք այդ մասին

գնումեր: Ինքն անձամբ իր խմբի ծնողկոմիտեի ղեկավար Մարինե Փիլոյանից բազմիցս վերցրել է այդ գնումները և դրել օգտագործման: Իր աշխատելու սկզբնական շրջանում ամիսը մի ծնող էր կատարում այդ գնումները, սակայն հետագայում ծնողների միջև եղավ ներքին համաձայնություն, որ արդեն յուրաքանչյուրը 1.000-ական դրամ հավաքեն ամսեկան: Այս թեմայով տնօրենի հետ խոսակցություն եղել է միայն մեկ անգամ, որից հետո նա այլևս չի մասնակցել ոչ մի խոսակցության և որոշումների կայցման, այլ իրենք և ծնողներն են որոշել: 2017 թվականի ձմռանն աշխատակիցներից մեկը բոլորին փոխանցել է տնօրինության կողմից կայացված որոշման մասին, այն է՝ յուրաքանչյուրը 1.000-ական դրամ հավաքեն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետարանի այն աշխատակիցների համար, ովքեր եկել են հերթական ստուգումների մանկապարտեզում: Իրենք այդ գումարը հավաքել և տվել են տնօրինությանը՝ նույն աշխատակցի միջոցով փոխանցելով, սակայն թաղապետարանի աշխատակիցներին տրվել է այդ գումարը, թե ոչ ինքը տեղյակ չէ: 2018 թվականի ձմռանը՝ հստակ ամիսը և օրը չի հիշում, երբ տնօրենը բացակայում էր, տնտեսական գծով փոխտնօրեն Մարիգարիտա Աշչյանն ասել է, որ առաջացել է փաստաթղթային խնդիր, որը կարող էր լուծել միայն տնօրենը, ով սակայն այդ ժամանակ ներկա չէր, և դրա պատճառով իրենք այդ խնդիրը լուծելու համար հրավիրել են մասնագետի, որն ինքը հետագայում խոսակցություններից իմացել է, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թաղապետարանի ֆինանսական բաժնի աշխատակից է եղել, ում այդ խնդիրը լուծելու համար պետք է վարձատրեին: Այդ նպատակով յուրաքանչյուրից 500-ական դրամ է հավաքվել և իրենք այդ գումարը տվել են Մ.Աշչյանին: Բացի այդ, մոտ 2-3 ամիսը մեկ անգամ տնօրենի աշխատասենյակում գտնվող տպիչ սարքի թանաքամանը լիցքավորելու նպատակով իրենից հավաքվում է 100-ական դրամ, և սա պարբերաբար: Ըստ համաշխարհային չափանիշների՝ խնդիրով երեխաների դեպքում յուրաքանչյուր խմբում 8 երեխայից ավել չի կարող լինել: Ներկայումս իր խմբում կա 8 երեխա: Սակայն 2017 թվականի ապրիլ-սեպտեմբեր ամիսներին իր խմբում եղել է 9 երեխա, որոնցից մեկը՝ Ալեքսը գրանցված չի եղել: Ինքը նրա հորից՝ Սարգիս Հակոբջանից իմացել է, որ նա Կ.Հարությունյանին ինչքան պետք է տվել է գումար, որ Ալեքսը գա մանկապարտեզ, որի մասին կա ձայնագրություն, որտեղ Կ.Հարությունյանը նշել է, որ Ալեքսի հայրն իրեն գումար է նվիրել: Կ.Հարությունյանի հետ այս մասին խոսակցություն եղել է սույն թվականի մայիսի 30-ին: Երբ պետք է լիներ մեր մանկապարտեզի նախաներառական բաժնի բացումը՝ 2016 թվականի ապրիլի 29-ին, դրանից հետո մանկապարտեզ հյուրեր էին գալիս՝ տեսնելու մանկապարտեզը, շրջայց կատարելու և տնօրենը կազմակերպեց այսպիսի առաջարկ իրենց համար, իրենք սպասք պետք է գնեին այդ հյուրերին ընդունելու համար՝ որը կազմեց 50.000 ՀՀ դրամ, որն էլ բաժանվեց 24 աշխատակցի մեջ, որի մեջ չէին հաշվվում մյուս մասնաշենքի աշխատակիցները և տնօրինությունը: Կոնկրետ յուրաքանչյուրը որքան գումար հավաքեցին, չի հիշում, բայց մինչև գումարները կհավաքվեին, այդ սպասքը ծանոթ խանութից, որտեղ աշխատում էր մանկապարտեզի սաներից մեկի հայրիկը, վերցրեցին առանց գումարը վճարելու՝ հետագայում վճարելու պայմանով: Բացի այդ, երբ ինքը նոր էր ընդունվել աշխատանքի չի հիշում, թե որտեղից եկել էր մեկ հոգի ստուգող, որ ստուգեր արդյոք իրենց դիպլոմները

կազմակերպի: Որի համար էլ իրենց խումբը մեկ օր 2.000ՀՀ դրամի ընդմիջում է կազմակերպել՝ յուրաքանչյուրը 500 դրամ հավաքելով: Բացի այդ, իրենց խմբի օգնականներից մեկը՝ Սիրանուշ Պետրոսյանն աշխատում էր նաև Փյունիկ բարեգործական կազմակերպությունում որպես հատուկ մանկավարժ: Նա տնօրենի հետ համաձայնության էր եկել, որ շաբաթը երկու կամ երեք անգամ ժամը 12:00-ից հետո նա գնում էր և այդ բացակայած ժամերի գումարը՝ ամսական 13.000ՀՀ դրամ առձեռն տալիս էր հաշվապահին, իսկ նրա գործառույթը 12:00-ից հետո իրենք էին կատարում, քանի որ նրան փոխարինող չէին բերում: Այսինքն՝ Սիրանուշին բացակա չէին դնում օրենքով սահմանված կարգով և նա ամբողջական աշխատավարձն էր ստանում: Մոտ մեկ տարի առաջ որոշվեց, որ մանկապարտեզի ընդհանուր դահլիճի վարագույրները փոխել և երկու մասնաշենքերի ավարտական խմբերը որոշել էին, որ իրենք են դա անելու՝ յուրաքանչյուր երեխա 3.000ՀՀ դրամ գումար պետք է տար, ընդհանուր չի կարող ասել՝ որքան գումար: Սակայն հավաքելուց հետո գումարը պակասեց, և տնօրենը եկավ իրենց խումբ և ասաց, որ խմբի և բաժնի մյուս՝ ոչ ավարտական խմբի երեխաները նույնպես պետք է գումար հավաքեն՝ յուրաքանչյուրը 500 դրամ: Իրենք այդ գումարը նույնպես հավաքել և տվել են, որոշ ժամանակ անց այդ վարագույրները կախեցին: Ավելացնեմ, որ վարագույրը կարելու համար իրենք նույնպես գումար են հավաքել, հստակ գումարի չափը չի կարող ասել, բայց ամբողջ մանկապարտեզի աշխատողները տվել են: Մանկապարտեզ հաճախակի պրակտիկանտներ են գալիս, որոնց համար յուրաքանչյուրի պրակտիկայի ղեկավարը գումար պետք է ստանա, սակայն ինքը գումարի չափը չգիտի: Անձամբ իրեն կցված՝ մեկ անգամ երեք, մեկ անգամ չորս պրակտիկանտ է ունեցել, սակայն ոչ մեկի համար չի վարձատրվել: 2016 թվականի դեկտեմբերի 1-ին հաշմանդամության օրվա հետ կապված «Վորդ Վիժընն» ընկերությունը մանկապարտեզի հաշվին 150.000ՀՀ դրամ գումար էր փոխանցել, որպեսզի սաների համար խաղեր գնեն իրենց հատուկ կայք էջից, դրանք զարգացնող հատուկ խաղեր էին: Տնօրենն իրենց կանչել և ասել է, որ կան խաղեր այդ կայք էջում, սակայն դրանցից ոչ մեկն իրենց չի համապատասխանում, և իրենց խմբերին այդպես էլ այդ խաղերից չհասավ, սակայն տնօրենը պատվիրել էր խաղեր, թե ոչ, ինքը տեղյակ չէ: Քանի որ իրենց ի սկզբանե շատ քիչ խաղեր են տրամադրել, իրենք դիմել են տնօրենին, որպեսզի խաղեր տրամադրեն, տնօրենն ասել է, որ այդ հարցը լուծեն ծնողների միջոցով՝ նրանք գումար հավաքեն և խաղեր գնեն: Այս երեք տարիների ընթացքում խաղերի հետ կապված իրենք բոլոր հարցերով դիմել են ծնողներին, ովքեր բերել են անհրաժեշտ խաղալիքները: Քանի որ տնօրենը թողել է այդ հարցի լուծումն իրենց, իրենք այդ հարցով անձամբ դիմել են Արբեսը ընկերությանը և իրենց ծրագրի կոորդինատոր, Արբեսի տնօրենի օգնական Շուշանիկին, ազգանունը չգիտի, սակայն մերժել են և օգնություն Արբեսից խաղերի տեսքով չեն ստացել: Իրենց խաղասենյակի չորս պատուհանների լուսամուտագոգերը շատ ցածր էին և երեխաները բարձրանում էին ու դառնում էր վտանգավոր, ճաղավանդակներ էին անհրաժեշտ: Դիմել են տնօրենին, ասել է, որ ծնողներին դիմեն այդ հարցով: Եվ իրենք ծնողների և իրենց 5 հոգանոց անձնակազմով յուրաքանչյուրը 1.800ՀՀ դրամ գումար են հավաքել և աշխատակիցներից մեկի հայրը պատրաստել է պատուհանների համար ճաղավանդակներ: Յուրաքնաչյուր հարցով, որ դիմել են տնօրենին, նա իրենց ասել է դիմեն

վերանորոգեն կամ փոխեն: 2017 թվականի սեպտեմբեր ամսին և մեկ անգամ էլ 2018 թվականի մայիս մասին փչացել են սահնանգույցի և խոհանոցի ծորակները, որոնք սարքելու համար իրենք առաջին ծորակը 8000ՀՀ դրամով են գնել, որի գումարը ծնողներն են տվել, իսկ երկրորդ ծորակը ձեռք են բերել բոլորը, ամսական ծնողների կողմից հավաքվող ընդհանուր 6.500ՀՀ դրամ տնտեսական ապրանքների գումարով և պակաս մասն իրենց կողմից լրացնելով՝ 1.500ՀՀ դրամ, յուրաքանչյուրը 300ՀՀ դրամ: 2018 թվականի ապրիլ ամսին մեկ անգամ դռան փականը փչացել է և այն սարքել է իրենց աշխատակիցներից մեկի ամուսինը: Սույն գործով բողոքելուց հետո երկու անգամ ծորակի խողովակի հետ կապված խնդիր է եղել, և առանց իրենց դիմելու այդ հարցերը լուծվել են, մեկ անգամ էլ ծորակ է փչացել, կրկին սարքել են՝ տնօրինության կողմից նախաձեռնված: Երեք տարիների ընթացքում ոչ մի անգամ իրենց խումբը գրենական պիտույքներ չի ստացել, չնայած տնօրենը մեկ անգամ ասել է, որ տարեկան 10.000ՀՀ դրամ մանկապարտեզը ստանում է այդ հարցը լուծելու համար: Հստակ չգիտի, հավանաբար քաղաքապետարանն է տալիս: 2017 թվականի ամռանը, հստակ ամիսը չի հիշում, փոխտնօրեն Ռուզաննայի որդին է բանակից զորացրվել, տնօրենն իրենց կանչել է և ասել յուրաքանչյուրը 1000-ական դրամ հավաքեն, իրենց խումբը հրաժարավել է և չի տվել այդ գումարը: Լսել է նաև, որ իրենց աշխատակիցներից մի քանիսին աշխատանքային ժամերին ուղարկել է իր տուն՝ մաքրություն կատարելու, սակայն որքանով տեղյակ է, իրենց խմբի աղջիկները չեն գնացել, հրաժարվել են: Իրենց մասնաշենքի թեքահարթակներից տնօրենը թույլ չի տալիս օգտվել՝ պատճառաբանելով, որ դեպի թեքահարթակներ տանող դռները բացել-փակելուց զամոկները կփչանան: Իրենց մասնաշենքում առկա է լոգասենյակ, որը նախատեսված է աշխատակիցների համար, սակայն դա ևս փակի տակ է պահում և դրանից օգտվում է միայն ինքը՝ տնօրենը: Գործավարի հաստիքում գրանցված է հաշվապահ Գայանեի քրոջ աղջիկը, ում անունը Մերի է, սակայն իրենք նրան աշխատանքային ժամերին չեն տեսնում, նրա գործառույթները որպես այդպիսին կատարում է տնտեսական գործով փոխտնօրենը՝ Մարգարիտա Աշչյանը: Հաստիքացուցակում իրեն տրված պաշտոնը և իր փաստացի կատարած գործառույթները հատուկ մանկավարժի են, սակայն իր աշխատանքային պայմանագիրը դաստիարակի է, և պայմանագիրը շատ թերի է ձևակերպված, մասնավորապես՝ դրանում նշված չէ աշխատանքային ժամերը, աշխատավարձի չափը: Ինքը երեք տարի է աշխատում է 9/ինը/ ժամ, սակայն որքանով իրեն հայտնի է՝ հատուկ մանկավարժի շաբաթական աշխատանքային ժամը 22 է, իսկ դաստիարակինը՝ 36 ժամ է, իսկ իրենք աշխատում են շաբաթական 45 ժամ: Իր աշխատելու առաջին մեկ տարին տնօրենն իրենց ասել է, որ լավության կարգով է իրենց 16:30 թույլ տալիս դուրս գալ աշխատանքից, քանի որ ըստ քաղաքապետարանի՝ մանկապարտեզի աշխատանքային ժամերը 08:30-17:30-նն են:

Նախաքննության ընթացքում Երևանի թիվ 92 մանկապարտեզի տնօրեն Կարինե Հարությունյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2009 թվականից հանդիսանում է Երևանի թիվ 92 մանկապարտեզի տնօրեն, իր աշխատանքային պարտականությունների մեջ մտնում է հիմնականում կազմակերպչական գործառույթը: Մանկապարտզի նախաներառական խմբերը 3-ն են: Երևանի քաղաքապետարանը թիվ 92

մոտ 300.000ՀՀ դրամ գումար, որն իրենք համապատասխան պայմանագրերի հիման վրա փոխանցել են ապրանքների մատակարար կազմակերպություններին՝ քարտային եղանակով : Քանի որ գումարը քիչ է եղել, իրենք այն ուղղել են մանկապարտեզի հիմնական 6 խմբերի տնտեսական ապրանքները հոգալուն, իսկ նախաներառական 3 խմբերին չեն տրամադրել տնտեսական ապրանքներ : Նախաներառական խմբերում անհրաժեշտ տնտեսական ապրանքները գնել են երեխաների ծնողները : Սակայն 2018 թվականի հունվար ամսից Երևանի քաղաքապետարանը մանկապարտեզի տնտեսական ապրանքների ձեռքբերման համար տարեկան փոխանցել է մոտ 1.300.000ՀՀ դրամ գումար, որից արդեն նախաներառական խմբերին նույնպես հատկացվում է գումար՝ տնտեսական ապրանքների համար : Մանկապարտեզի հատուկ խմբակում հաճախող Ալեքս անունով սանը չգրանցված չի եղել, այլ մի քանի օր փորձնական հաճախել է, որից հետո գրանցվել է : Ինքը մանկապարտեզում ոչ մի անգամ ոչ մի նպատակով գումարներ չի հավաքել և տեղյակ չէ ոչ մի դրամահավաքից : Մանկապարտեզի աշխատակից Սիրանուշ Պետրոսյանը չի բացակայել իր աշխատելու ընթացքում, հաճախել է աշխատանքի լրիվ աշխատանքային դրույքաչափով, իրեն ոչինչ հայտնի չէ այն մասին, որ վերջինս միաժամանակ աշխատել է նաև «Փյունիկ» ԲԿ-ում : Իրենց մանկապարտեզում արտադրական պրակտիկա անցնող ուսանողների պրակտիկայի ղեկավարների համար վարձատրություն իրենք չեն ստացել, ուստի պրակտիկայի ղեկավարներն իրենց մոտ չեն վարձատրվել : Մանկապարտեզին կից շինությունը հանդիսանում է ընտրատեղամաս :

Նախաքննության ընթացքում նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև Երևանի թիվ 92 մանկապարտեզի նախաներառական խմբերի աշխատակիցներ և մանկապարտեզի նախաներառական խմբերի սաների ծնողներ Աննա Արսենյանը, Արուսիկ Իգիթյանը, Գյուլնարա Ջիվանյանը, Մարիամ Լևոնյանը, Մարիամ Սարգսյանը, Մարիաննա Կուրինյանը, Մարինե Փիլոյանը, Սարգիս Հակոբջանը, Սիրարփի Բեգլարյանը, Քրիստինե Առաքելյանը, Քրիստինե Խաչատուրի Առաքելյանը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք կարևոր հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրայլից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243 և 248 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 16191918 քրեական գործով նշանակել դատահաշվապահական-դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սերվիս Էյէմ» ՍՊԸ-ին:

2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում ինչ գործունեություն է իրականացրել, ինչ հիմունքներով և իրավական հիմքերով,

բ) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018

բյուջեի կողմից գումար հատկացվել է, թե ոչ, եթե այո, ապա որքան գումար է հատկացվել և ինչ նպատակներով:

գ) Երևանի թիվ 92 մանկապարտեզը արտաբյուջետային միջոցներ ունեցել է, թե ոչ, եթե այո, ապա դրանք որտեղից են գոյացել, որքան արտաբյուջետային միջոցներ են առաջացել, դրանք սահմանված կարգով փաստաթղթավորում ստացել են, թե ոչ, եթե ոչ, ապա կոնկրետ ինչպիսի խախտումներ են թույլ տրվել:

դ) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում՝ ըստ ամիսների, ինչ ապրանքներ է ձեռք բերել, ինչ ծառայություններ է ստացել, ինչ նպատակով, ինչ արժեքով, եղել է արդյոք ապրանքների ձեռք բերումը, ծառայությունների ստացումը հաշվապահական հաշվառման տեսանկյունից հիմնավորված և համապատասխան նորմատիվային ակտերով սահմանված չափորոշիչներին, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ պատճառով և ով է դրա համար պատասխանատու ու արդյունքում որքան վնաս է պատճառվել,

դ) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում՝ ըստ ամիսների, ինչպիսի ծառայություններ է մատուցել և ինչ արժեքով,

ե) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում սննդամթերքի և այլ ապրանքների դուրսգրում եղել է, թե ոչ, եթե այո, ապա արդյոք այն եղել է հիմնավորված, թե ոչ, եթե ոչ, ապա կոնկրետ ինչ խախտումներ են թույլ տրվել, ում կողմից, դրա հետևանքով ինչ վնաս է պատճառվել պետությանը և ով է դրա համար պատասխանատու,

զ) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում պետական կամ համայնքային բյուջեից ստացված և արտաբյուջետային գումարների հաշվին ինչպիսի ծախսեր են կատարվել՝ ըստ ծախսահաշիվների: Կատարված ծախսերը սահմանված կարգով փաստաթղթավորում ստացել են, թե ոչ, եթե ոչ, ապա կոնկրետ զուտ հաշվապահական հաշվառման և տնտեսագիտական տեսանկյունից ինչպիսի և ում կողմից են թույլ տրվել խախտումները և այդ խախտումների հետևանքով վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ինչ գումարի չափով:

է) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում պարգևավճարներ, այդ թվում դրամական օգնություններ տրամադրվել են, թե ոչ, եթե այո, ապա դրանք փաստաթղթավորում ստացել են, թե ոչ, եթե ոչ, ապա զուտ հաշվապահական հաշվառման և տնտեսագիտական տեսանկյունից ինչպիսի և ում կողմից են թույլ տրվել խախտումները և այդ խախտումների հետևանքով վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ինչ գումարի չափով:

ը) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում որպես օգնություն դրամական միջոցներ կամ այլ իր, առարկաներ ստացել է, թե ոչ, եթե այո, ապա դրանք սահմանված կարկով փաստաթղթավորվել են, թե ոչ, եթե ոչ, ապա ում կողմից է թույլ տրվել

թույլ տրվել են, թե ոչ, եթե այո, ապա ում կողմից, ինչպիսի խախտումներ են թույլ տրվել, այդ խախտումների հետևանքով վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ինչ գումարի չափով:

թ) Երևանի թիվ 92 մանկապարտեզի 2015 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում, աշխատավարձերի և դրան հավասարեցված այլ դրամական միջոցների պահումներ կատարվել են, թե ոչ, եթե այո, ապա որքան է կազմում վերջիններիս աշխատավարձից կամ դրան հավասարեցված այլ դրամական միջոցներից անհիմն կատարված պահումների գումարների չափը:

3. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն համապատասխան փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Պարզաբանել փորձագետներին, որոնց հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Ծանոթություն: հետազոտման ենթակա նյութերը քրեական գործի նյութերի հետ կտրամադրվել փորձագետի կողմից համապատասխան միջնորդություն ներկայացնելու դեպքում:

Ավագ քննիչ՝ **Հ.Գ.Քարտաշյան**